

ՎՐԱՏՎՈՒԹՅԱՆ ԺԱՆՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՄՈՒԼՈՒՄ

Ա. Ա. ԽԱՌԱՏՅԱՆ

Հայաստանի Հանրապետության մամուլում լրատվական ժանրը կրում է որակական փոփոխություններ, որոնք թելադրված են մամուլի՝ նախորդ տասնամյակների հետ համեմատած ազատ պայմաններով և հասարակական կարծիքն արտահայտելու շատ ավելի լայն հնարավորություններով: Ակնհայտ է նաև, որ նորահայտ խմբագիրների ու լրագրողների մի զգալի մասը շունչի մասնագիտական կրթություն և նույնիսկ՝ լրագրողի որևէ հմտություն: Ասելիքի ցանկությունը շատ ավելի մեծ է, քան մասնագիտորեն արտահայտվելու կարողությունը: Ասվածը առանձնապես աչքի է ընկնում նորույթի՝ լրատվության ժանրում: Ժանրի արդիականացումը՝ իր մատուցման ձևով և լեզվով, շարունակում է մնալ մամուլի կարևոր խնդիրներից մեկը: Եվ դարձյալ, ժանրի արդիականացումը ենթադրում է անցյալի և ներկայումս հարատևող՝ հայ լրագրության արժեքավոր ավանդույթների, լրագրական մշակույթի յուրացումը: Առանց դրա հնարավոր չէ ստեղծել ներկայիս լրագրողների սերնդի սեփական արժեքները, որոնցով շարունակվելու ականալիք ունի իր երրորդ հարյուրամյակի շնամ անցած հայ լրագրությունը:

Սույն հետազոտության նյութերը վերցված են 1995—1996 թթ. հրատարակված մի շարք պարբերականներից («Ազգ», «Երկիր», «Լրագիր», «Լրագիր օր», «Հայաստանի Հանրապետություն», «Ավանգարդ», «Հայք», «Հայաստան», «Առավոտ», «Շրջան» թերթերից): Շարադրանքում օգտագործված մեջբերումների աղբյուրները չեն նշվում, որովհետև հեղինակը նկատի է ունեցել ոչ թե մասնավոր, այլ ընդհանուր իրողությունները մեր լրագրության մեջ:

1. Մատչելիություն: Արդի լրատվության, լրատվական հոգվածի կարևոր նախապայմաններից մեկը նյութի դուրըմբռնելի շարադրանքն է: Մատչելիությունը ենթադրում է շարադրանքի այնպիսի բաղադրամասեր, ինչպիսիք են դարձվածի պարզությունը, համառոտությունը, նորույթը կամ դրա էությունը անմիջականորեն ընթերցողին հասցնելը: Ընթերցողին չի կարելի հոգնեցնել երկարաշունչ դատողություններով, լարել նրան և ստիպել աշխատելու, ի տարբերություն լրագրական այլ ժանրերի, երբ այս կամ այն չափով լրագրողի հետ պահանջվում է ընթերցողի փոխադարձ աշխատանքը՝ շարադրանքը յուրացնելիս: Այլ կերպ ասած, լրատվության մեջ նյութի դիմադրությունը պետք է բացառվի կամ հասցվի նվազագույնի:

Լրատվական նյութերում հաճախ խախտվում են վերոհիշյալ պայմանները: Բուն նյութը՝ փաստը, իրողությունը, կորչում է մանվածապատ, մշուշոտ դատողությունների մեջ: Ընթերցողից պահանջվում են լրացուցիչ ջանքեր՝ տարբերելու կարևորն անկարևորից, փաստը՝ դատողությունից կամ փաստի մեկնաբանությունից: Որքան պարզ է շարադրանքը, այնքան հեշտ է ընկալվում փաստը՝ երևույթը կամ իրողությունը: Բարդ նախադասությունների կուտակումը այդ պարզության, ուրեմն և լրատվության թշնամին է, որից անպայ-

ման պե՛տք է խուսափել: Նույն կերպ պետք է խուսափել գրքային դատողություններից, բառերից ու բառակապակցություններից, դրել բոլորին հասկանալի մի լեզվով, որը թեև խոսակցական չէ, բայց և գրքային էլ չէ:

Սկսնակ լրագրողին հաճախ դարանակալում է ավելորդ կրկնության և ավելորդ մանրամասների գայթակղությունը: Երկարաշունչ դարձվածն ու կրկրնությունները կարող են հասցնել նրան, որ փաստերի բազմության մեջ կորչի կարևորը: Այս դեպքում ընթերցողը պետք է կատարի մտավոր աշխատանք, որը հակասում է լրատվության նպատակին ու կանոններին: Ի դեպ, դա հենց այն թերի մնացած աշխատանքի լրացումն է, որ պետք է անել լրագրողը՝ նախքան նյութը տպագրության հանձնելը: Նվազ պրոֆեսիոնալիզմը հասցնում է նվազ ընկալունակության: Ահա ծանրամարս դարձվածի մի նմուշ.

«Լիլ դը Փարիզի Արվեստի թանգարանում ապրիլի 2-ից սկսել է գործել Ռուսաստանում ծնված, ազգությամբ հրեա, ֆրանսիացի նկարիչ Մարկ Շագալի ստեղծագործության վաղ շրջանին՝ 1907—1922-ին նվիրված մի ցուցահանդես, որը ի մի է բերվել արվեստագետի տանը և արտասահմանյան (մասնավորապես ռուսական) թանգարաններում գտնվող ավելի քան 200 կտավ. հաղորդում է «Լա րել Ֆրանս» եռամսյակային պարբերականը, որը 100 հազար տպաքանակով լույս է տեսնում 6 լեզուներով»:

Լրագրողն այստեղ առաջին իսկ նախադասությամբ ցանկանում է պատասխանել մի ամբողջ շարք հարցերի՝ որտեղ, երբ, ով, ինչ, լրատվության որ աղբյուրի համաձայն, ինչ հատկանիշներ ունի այդ աղբյուրը: Արդյո՞ք այս ամենը չափազանց շատ չէ սկզբի համար, և արդյո՞ք խեղճ ընթերցողն այս դեպքում չի հիշեցնի այն հյուրին, որին չափազանց հյուրասեր տանտերը չղնում է միանգամից հյուրասիրել բազմազան խորտիկներով:

Լեզվական և իմացական թերությունները առավել ընդգծում են պրոֆեսիոնալիզմի պակասը. նախ, եթե Շագալը հրեա է, ապա միաժամանակ ֆրանսիացի լինել չի կարող (կարելի էր՝ «ֆրանսիական նկարիչ»), ոչ թե «եռամսյակային պարբերական», այլ՝ «եռամսյա»: Կարելի էր ազատվել ավելորդություններից և խմբագրել՝

«Վիլ դը Փարիզի Արվեստի թանգարանում ապրիլի 2-ից գործելու է Մարկ Շագալի ստեղծագործության վաղ շրջանին (1907—1922) նվիրված ցուցահանդեսը, որն ի մի է բերել արվեստագետի տանը պահվող և արտասահմանի (մասնավորապես ռուսական) թանգարանների ավելի քան 200 կտավ, հաղորդում է «Լա րել Ֆրանս» եռամսյակը»:

Նորույթի մատչելիությանը սպառնում է նաև մանվածապատ շարադրանքը: Շարադրանքի խճողվածությունը առաջ է գալիս և լեզվական, և նյութի անբավարար իմացությունից: Թերի միտքը լրագրողը փորձում է ավարտուն դարձնել ոչ թե տրամաբանական ամբողջությամբ, այլ քմահաճ բառաբարդումներով: Դրա հետևանքով անավարտ միտքը կորել է բառերի ծանրության տակ և տարրալուծվել դրանց մեջ, ինչպես որդը՝ բադի ստամոքսում.

«Տեղեկատվական որոշակի ապաշրջավալման արդյունքում զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչները կարողացան տեղեկանալ կաթոլիկոսական ընտրությունների նախնական ընթացքի մասին»:

Տխուր է և ձանձրալի: Ովքեր էին տեղեկատվական շրջափակման կազմակերպիչները, ինչպես կատարվեց «որոշակի ապաշրջափակում», սրանք այնքան անկարևոր են, որ լրագրողը բավարարվում է սոսկ ակնարկով: Դե, եթե

կարևոր չեն, ապա ինչու ակնարկել և մշուշոտ դարձնել տեքստը: Կարելի էր շարադրել պարզ:

«Լրատվական ընդլայնվող հնարավորությունների շնորհիվ լրագրողները տեղեկացան կաթողիկոսական ընտրությունների նախնական ընթացքի մասին»:

Մանվածապատ ոճը դառնում է ավելի անտանելի, երբ մատուցվում է պաթոսի պատկառելի քանակով. «Նորանկախ մեր պետության տարեգրության մեջ պատմությանը պահ տրվելիք տարեդարձի մասնակիցները՝ Ազգային եկեղեցական ժողովի պատգամավորներն ու հյուրերն աշխարհի բոլոր ծայրերից, գիտակցում էին պահի կարևորությունն ու շուրջը»: Ընթերցողը պետք է կռահի, որ «պատմությանը պահ տրվելիք տարեդարձը» հետո է գալու, առնվազն մեկ տարի հետո, իսկ առայժմ խոսքը վերաբերում է կաթողիկոսական ընտրությանը: Արժե՞ արդյոք, ընթերցողին շշմեցնել այդքան հանդիսավորությամբ:

Մանվածապատ ոճը ի վիճակի է ոչնչացնել նույնիսկ հումորի այն շնչին բաժինը, որ երևում է լրատվության մեջ:

«Խմբագրությունների աշխատակիցները անկախ ինչ սեռի են ու նրանց ներկայացրած մամուլը ում ձեռն ու ոտն ու լեզուն է, շուկայական հարաբերությունների «անհուսալիքներ» այս ժամանակներում տեսնում են ամեն ինչ»:

Լրագրողը միայն բառեր է կուտակել, ուրիշ ոչինչ:

Ճոռոմոլությունից հրաժարվելու, թերևս, կօգնի լրագրողի պատրաստականությունը՝ փոխելու հարմար թվացող ոճը, գրել այնպես պարզ, ինչպես կարտահայտվեր բանավոր խոսքում:

2. Իրազեկություն: Նախքան լրատվության շարադրանքին ձեռնամուխ լինելը, լրագրողը պետք է ծանոթանա նյութին և դրա հետ կապվող այն բոլոր հանգամանքներին, որոնց անդրադառնալու է: Նյութի իմացությունը և իրազեկությունը լրագրողի՝ իր մասնագիտությունը և ընթերցողին հարգելու կարևոր նախապայմաններից մեկն է և լրատվության հաջողության նախապայմանը: Ցավոք, թերի գիտելիքները, ժուռնալիստական թեթևամտությունը բավական տարածված են Հայաստանի մամուլում: Անգիտությունը և ոչ իրազեկությունը, որ մի դեպքում ընթերցողի հեզնական ծիծաղը կարող են առաջացնել, միայն, պակաս կրթական պատրաստականության ընթերցողի համար կարող են վերածվել չարիքի՝ ոչ ճիշտ լրատվության: Լրատվությունը, որ կոչված է ընդլայնելու ընթերցողի իմացությունը, այս դեպքում վերածվում է իր հակադրությանը:

Ոչ իրազեկության սովորական դրսևորումներից են լրագրողի բացատրությունները մի երևույթի կամ իրողության մասին, որի վերաբերյալ իմացության պակասը լրացվում է երևակայությամբ:

«Ինչպես հայտնի է, ասիական երկրներում թագավորներն ունեին ենիշերիների հատուկ պատժիչ ջոկատներ, որոնք առավել դաժան և անմարդկային ձևով վարվում էին հենց յուրայինների հետ»:

Ոչ թե առհասարակ ասիական երկրներում, այլ միայն Օսմանյան Թուրքիայում էր, որ կային ենիշերիների զորախմբեր: Այնուհետև, ենիշերիները ոչ թե «հատուկ պատժիչ ջոկատներ» էին, այլ կանոնավոր զորք: Պակասը լրացնում է այն անհիմն դատողությունը, թե ենիշերիները «դաժան և անմարդկային ձևով էին վարվում հենց յուրայինների հետ»: Սա անհաջող ձևակերպումն է այն իրողության, որ ենիշերի էին դարձնում քրիստոնյաների երեսաններին և հետագայում նրանց օգտագործում նույն քրիստոնյաներին ճնշելու համար:

Բայց եթե մեկը ենիշերի էր դառնում, ապա քրիստոնյան նրա համար այլևս «յուրային» չէր կարող լինել:

Լրատվության բոլոր բաղադրիչները, էլ չենք խոսում դարձվածների, դրանց փոխկապակցվածության և հետևողականության մասին, պետք է ենթարկվեն լրագրողի վերահսկողության:

Լրատվական շփոթը, հակասական մտքերը և ոչ տրամաբանական դատողությունները ևս բխում են լրագրողի ոչ իրազեկությունից: Իր ասելիքը ճշգրտած, նյութը լավ պատկերացնող լրագրողը հազիվ թե տեղիք տա մեղանշումների: Թվում է՝ որևէ վրիպում չկա հետևյալ պարզ դատողության մեջ.

«Իրենց ելույթներում ակադեմիկոսներն ու գիտական բաժինների վարիչներն անդադարձա՞ն կարևոր հարցերի»:

Անտեսվել է այն, որ ակադեմիկոսը կոչում է, իսկ բաժնի վարիչը՝ պաշտոն, ուրեմն՝ նաև ակադեմիկոսը կարող է լինել բաժնի վարիչ, իսկ բաժնի վարիչը՝ նաև ակադեմիկոս:

Ոչ իրազեկությունը այդպիսին է մնում նաև այն դեպքերում, երբ ակնառու է լրագրողի հապճեպ աշխատանքը.

«Փետրվարի 13-ին Թուրքիայից և Թուրքիան Անկարայում ստորագրել են մինչև 2020 թ. տարեկան 15 մլրդ խմ գազ Թուրքիայից առաքելու մասին մի համաձայնագիր»:

Թուրքիայից ստանալն է գազ առաքողը, ուստի պետք է լիներ «15 մլրդ խմ գազ Թուրքիա առաքելու մասին մի համաձայնագիր»:

Լրատվության մեջ իրազեկության պակասը առանձնապես ցայտուն է գրասեղանի վրա կրոնի և եկեղեցու վերաբերյալ հրապարակումներում: Հասկանալի պատճառներով, կրոնական գիտելիքները տասնամյակներ շարունակ շրջանցվել են նույնիսկ պատմաբանասիրական կանոնավոր կրթություն ստացած սերունդների կողմից: Այդ բնագավառում աղքատիմացությունը առանձնապես աչքի էլ չէր ընկնում, որովհետև սակավ էին անդրադառնում այդ թեմային: Դրությունը կտրուկ փոխվեց վերջին տարիներին, երբ կրոնն ու եկեղեցին սկսեցին աստիճանաբար վերականգնել իրենց կորսված տեղը հասարակական գիտակցության մեջ: Լրագրողները, սակայն, ընկան դժվարին կացության մեջ, որովհետև այս դեպքում խոսքն արդեն վերաբերում էր ոչ թե գիտելիքների վերականգնմանը, այլև այդպիսիք նոր-նոր ձևեր բերելուն: Կյանքը ավելի արագընթաց գտնվեց, սկսվեցին կաթողիկոսական ընտրության նախապատրաստման ու անցկացման աշխատանքները՝ բեռնելով հասարակական կարծիքի ուշադրությունը: Այն գոհացնելու համար մամուլը վրա պրծավ թեմային, ավաղ, միանգամայն անպատրաստ վիճակում: Այս թեմայով հրապարակումները բընութագրելիս հաճախ կարելի է վկայակոչել Ավետարանի խոսքը՝ «Տէր ներիր զդա, զի ոչ գիտէ զինչ ասէ»:

«Համայն հայության աչքերն այսօր ուղղված են ս. Էջմիածին. դեպի հայ ժողովրդի ազգային կոնկլավը, այնտեղից «սպիտակ ծիլի» բարձրանալը տեսնելու ակնկալությամբ»:

Շփոթված են կաթոլիկական և Հայաստանյայց Առաքելական եկեղեցու ծեսերը: Հայ ժողովուրդը չունի «ազգային կոնկլավ» (կոնկլավը կաթոլիկ բարձրաստիճան կղերի՝ կարդինալների հավաքն է, որը զուգարկում է նոր պապ ընտրելու նպատակով): Իսկ սպիտակ ծուխը ազդարարում է ոչ թե կաթոլիկոսի, այլ պապի ընտրվելը:

Շնորհավորանքի հետ մեկտեղ, որոշ հեռագրեր ևս ի հայտ էին բերում անտեղյակություն:

«Ավելի ևս կարողունավորվի նվիրապետական արժույթի միջև սկիզբ առած գործակցությունը և կամրապնդվի Հայաստանյաց (ուղղագրությունը բրենագրին է—Ա. Խ.) եկեղեցու միասնականությունը»: «Նվիրապետական արքունիք» չի կարող լինել: Նվիրապետությունը եկեղեցու կառուցվածքին վերաբերող հասկացություն է, իսկ արքունիքը՝ աշխարհիկ, միապետի մերձավորապես շրջապատը:

Ոչ իրազեկության պատճառով նկատելի է մի երևույթ ևս. սխալ կիրառություն են գտնում կրոնական հասկացությունները, մանավանդ հոմանիշները: Ահա շատերից մեկը՝

«Ժողովուրդը ոգևորված էր և հայոց բարձրալի, Ամենայն հայոց կաթողիկոսի օրհնանքը ընդունեց հավատով ու սիրով»:

«Բարձրալի» Աստուծո հոմանիշն է, այն չի կարելի վերագրել կաթողիկոսին: Կրոնական դիտելիքների պակասը վերածվում է շափի զգացման պակասի, երբ շարադրանքի մեջ է ներխուժում քաղաքական ճիգը:

«Աշխարհիկ իշխանության մուտքը վեհաբանի դանդիմ՝ առաջացրեց հոգեվոր երկյուղածություն»:

Հոգևոր երկյուղածություն, առավել ևս կաթողիկոսի ընտրության պահին, կարող էր առաջացնել միայն հոգևորականների մոտքը: Ասենք, նաև, որ «հոգևոր երկյուղածություն» կարող է ապրել ցանկացած շողորքորթ՝ իր պետերին տեսնելիս և նույնիսկ առանց վեհաբանի դանդիմ:

Երբեմն լրատվության մեջ իրեն զգացնել է տալիս, հակված ենք կարծելու, սովորական լրագրական թեթևամտությունը:

«Տոն էր, Հիսուսը չխաչվեց, այլ հաբություն առավ»:

Թույլ տվեք կասկածել. քրիստոսն ինչպես էր հարություն առնելու, եթե չէր խաչվել:

Կրոնական դիտելիքների պակասը ուղեկցվում է նաև լեզվական վատ իմացությամբ.

«Ընդունելություն Մայր աթոռում»:

Պետք է լիներ՝ «Ընդունելություն Մայր աթոռ ս. էջմիածնում»:

Լրջության հավանող մի հոգևածում, որ վերաբերում է աղանդավորության ապագային բնութիւն, հանդիպում ենք մի իսկական շփոթի.

«Պատահական չէ, որ հայոց եկեղեցու սրբերը այն հայրերն են, որոնք իրենց գործով, հանձնարով, արյամբ ծառայել են հայ ժողովրդի շահերին, մինչդեռ քրիստոնեական և ոչ քրիստոնեական աղանդներն ու հաբավանությունները, սկսած ավետարանական, բողոքական, կաթոլիկ, ուղղափառ, հոգեգալստական և վերջացած կրիշնայական և այլ հոսանքներով, բացարձակորեն մերժում են ազգային հիմքերը: Բավական է թեկուզ ասել, որ հայոց եկեղեցու ընդունած սրբերին (Գրիգոր Լուսավորիչ, Տրդատ, Սահակ, Մաշտոց, Նարեկացի, Վարդան), նրանք մերժում են»:

Այստեղ միևնույն կաթսայի մեջ են լցվել և քրիստոնեական դավանանքները, և աղանդները: Այդ որտե՞ղ է ասված, որ կաթոլիկներն ու ուղղափառները «բացարձակապես մերժում են ազգային հիմքերը»: Կաթոլիկական ցանկացած ժողովուրդ ունի իր ազգային սրբերը, ճիշտ այնպես, ինչպես և ուղղափառները, այնպես որ սրբոց դաս ունենալը միայն հայ եկեղեցու մենաշնոր-

հը չէ: Հետևաբար, այս տեսակետից անիմաստ է Հայ Առաքելական եկեղեցին հակադրել քրիստոնեական մյուս եկեղեցիներին և բացառիկ առավելություն տեսնել այն բանի մեջ, որ սայլը շորս անիվ ունի:

Ծթե կրոնի և եկեղեցու վերաբերյալ իմացության պակասը (բայց ոչ երբեք այն լրացնելու հարցում անփութությունը) մի հայտնի չափով կարելի է բացատրել, ապա նույնը չի կարելի ասել քաղաքական ու հասարակական բնագավառում դրսևորվող անգիտության մասին: Արդի մեր լրատվության մեջ (ինչպես ե բոլոր բնագավառներում) անիրազեկության երևույթը, թվում է, կըշարունակվի այնքան ժամանակ, որքան լրագրողները չեն հրաժարվի ամեն ինչի մասին գրելուց և չեն դիմի նեղ մասնագիտացման: Ըստ երևույթին, այսօր առանձնացված, իրենց գործունեության որոշակի բնագավառն ունեն քաղաքական մեկնաբանները (ոչ բոլոր դեպքերում) և մարզական լրագրողները: Մյուսները գրում են՝ ով ինչ պատահի, իսկ նման դեպքերում ծառանում է, ինչպես հայտնի է դեռ «Տերն ու ծառան» հայտնի հեքիաթից, ոչխարների սպանդի վրա տանգր: Եվ արտառոցը կարող է հայտնվել լրատվության մեջ: Այսպես, հանրապետության ոչ անհայտ արվեստագետներից մեկը իր կարծիքն է հայտնում «անգլիական սահմանադրության» մասին, նախապես հայտնելով, որ ծանոթ է «համաշխարհային սահմանադրության» (չատ ցանկալի կլիներ իմանալ, թե որտեղ է հռչակվել այդ սահմանադրությունը) որոշ ակտերի:

«Ես, օրինակ, Անգլիայում էի և տեսա, որ անգլիացին կարող էր նաև ծանոթ չլինել Շեքսպիրի գործերին, բայց անգիր գիտեր իր երկրի սահմանադրությունը»:

Բայց ինչպես կարելի է «անգիր» իմանալ մի բան, որը գոյություն չունի. պետք չէ անպայման իրավաբան լինել՝ իմանալու համար, որ Անգլիան սահմանադրություն չունի: Լրագրողը պետք է վերահսկի ուրիշի խոսքն ու միտքը և գիտելիքներ ցուցաբերի այն բնագավառից, որի մասին գրում է:

«Ըստ «Խաբար-սերվիսի», Բաֆուն հայտնվեց դժվար կացության առջև. ֆանգի Իրանը Ադրբեջանի նավթի միակ արտահանողն է»:

Բայց Ադրբեջանից բացի, ոչ մի երկիր չի կարող արտահանել նրա նավթը: Պարզապես պետք է կռահել, թե ինչ է ցանկացել ասել լրագրողը:

Հայ ընթերցողին քաջ հայտնի Պ. Յավորովին նվիրված մի հրապարակման մեջ բուլղարացի բանաստեղծը համարվում է «հանիրավի» մոռացված (անտեսվում է նույնիսկ այն, որ Երևանում նրա անվամբ դպրոց կա): Անգիտությունը, ի դեպ, այստեղ հանդես է եկել ճոռոմ ոճով:

«Մեր պատմության էջերում տակավին կան բազում հերոսական դրվագներ, որոնք հանիրավի մոռացումի մեզ ու մշուշով են պատված, բայց նրանց (?) կատարած գործի լույսը ժամանակների խռոչներում, ժողովրդի հիշողության մեջ դեռ շողարձակում է: Նվիրական այդ անուններից է բուլղարացի բանաստեղծ Պեյո Յավորովը, հեղինակը «Հայերը»՝ «Արմենցի» բանաստեղծության»:

Խոսքն այստեղ, ցավոք, վերաբերում է գիտելիքների այբուբենին: Ըստ երևույթին, լրագրողի իրազեկությանը ներկայացվող պահանջները ամենամոտիկ առաջիկայում հարկ կլինի բավարարել արդիական ուսուցման բովանդակությամբ և դրան համապատասխան մեթոդներով: Բուհական ընդհանուր գիտելիքները (իմացությունը) յուրացնելուց հետո, ուսումնառության վերջին կուրսերում, լրագրողը խորամուկի կլինի որևէ մասնագիտության մեջ (իրավա-

գիտություն, տնտեսագիտություն, սոցիոլոգիա և փիլիսոփայություն, քաղաքականություն, բժշկություն, արվեստ, գրականություն և լեզու, մարզական կյանք և այլն): Ոչ թե այս մասնագիտությունները գործադրողի, այլ լուսաբանողի, դրանց մասին լրատվություն տալու կամ տեղեկացնելու իմաստով: Մի տեսակ լրագրական կամուրջ՝ այս մասնագիտությունների (մասնագետների) և ղանգվածային ընթերցողի միջև:

3. Համոզելություն: Լրատվության մատուցման կուլտուրան հայ մամուլում ասվում է իր ձևավորման շրջանը: Նյութի թարմությունը, հրատապությունը, մատուցման ձևը հիմնականում ձեռք են բերվում մամուլի էջերում, աշխատանքի ընթացքում: Մինչդեռ, լրագրողների գործնական աշխատանքին պետք է նախորդեն նախապատրաստական մի լուրջ ժամանակաշրջան, որ նշեցինք վերը՝ մասնագիտական ուսուցման փուլը: Սակայն, ինչպես տեսանք, նույնիսկ մասնագիտական ընդհանուր ուսուցում է անցել լրագրողների մի մասը, որոնց՝ ոչ մասնագետ լրագրողների հետ սպասում են հավելյալ դժվարություններ՝ գործունեության մի որոշ բնագավառի պահանջները ըստ ամենայնի բավարարելու տեսակետից: Պակասում է նաև արդիական լրատվության փորձը, որ լրագրողների նոր սերնդին չեն կարող փոխանցել ավագ տարիքի շատ լրագրողներ: Եվ թերթերը մենում են հմտություն ու փորձ յուրացնելու միակ ասպարեզը՝ արտացոլելով դրա հետ կապված անխուսափելի բոլոր երևույթները՝ սև աշխատանքը, կորուստներն ու վրիպումները, հաջողություններն ու վարպետության միտումները: Լրատվության ասպարեզում իրենց զգացնել են տալիս խոհանոցային բուրմունքն ու քրտինքը, որոնցից պետք է ազատվել ազնիվ և նպատակասլաց աշխատանքով՝ ծանոթանալով հայրենական, ուսական և արևմտյան լրատվության ոչ միայն դասական, այլև նորագույն դրսևորումներին:

Օբյեկտիվ իրողությունը կամ իրադարձությունը ղանգվածային ընթերցողին գոնե մոտավորապես ներկայացնելու կարևոր պահանջներից մեկը համոզելությունն է: Համոզելությունն ունի ընդհանրական բնույթ, այն անհրաժեշտ է առհասարակ ամբողջ լրատվությանը, այսինքն՝ ամբողջ նյութը պետք է համոզիչ լինի: Լրատվության մեջ այն սկսվում է յուրաքանչյուր դատողությունից, որպեսզի ընթերցողը չերկմտի կամ չկասկածի դրա ճշմարտացիությանը: Բավական է մեկ-երկու ոչ համոզիչ (տրամաբանական կամ փաստական և կամ այլ կարգի) դարձված, որպեսզի դրան նախորդող կամ հաջորդող ամբողջ փայլուն թվացող նյութը արժեզրկվի ընթերցողի աչքին:

Թվում է՝ համոզելության առթիվ խոսելիս առաջին հերթին պետք էր ի հայտ բերել մեր լրատվության մեջ տարածված պակաս համոզիչ, կասկածելի կամ ոչ համոզիչ դատողությունների մի շերտը: Դժբախտաբար, լրատվության մեջ տարածման և հաճախականության տեսակետից դրանք իրենց տեղը զիջում են շատ ավելի անտանելի մի խոտանի՝ անհեթեթությամբ: Ահեթեթությանը՝ զուտ տրամաբանական իմաստով: Ահեթեթությունը ոչ սակավ դեպքերում ի հայտ է գալիս գոհակամտության կամ հույս կասկածելի երգիծանքի հետ գիրկընդհառն:

«Երանելի... կոլխոզ-սովխոզների (սովխոզ՝ էն ժամանակ նշանակում էր սոված խոզ) ժամանակ պարտադիր էր գեղատեղերից գործուղել՝ պայմանով, որ գործուղված ընկերը ավարտելուց հետո վերադառնա ըստ պատկանելույն, ֆանգի նրա 4—5—6 տարվա փորձն իր վրա էր վերցնում տվյալ գյուղի կամ

կուլկամսով խոզ վարչությունը»:

Օրբեմն անհեթեթությունը լրատվության մեջ կարող է հայտնվել լրագրողի մտավոր վերահսկողությունը մի պահ թուլանալու դեպքում. այսինքն՝ ակամա: Բայց դա բնավ չի փոխում բանի էությունը, և անհեթեթությունը մնում է անհեթեթություն:

«Բայց բանը ոչ միայն մեր ժողովրդի դեմ կատարված ցեղասպանությունն է... այլև այն վտանգի ըմբռնումը, որ կարող է բերել նման ֆաղափականություններ (նկատի ունի ցեղասպանության քաղաքականությունը—Ա. Խ.) և դրա դեմ միավորվելու ձգտումը»:

Միթե ցեղասպանության քաղաքականության դեմ միավորվելու ձգտումը վտանգ է ներկայացնում: Հեղինակը դրա ճիշտ հակառակն է ցանկացել ասել: Պետք է լինե՞ր՝

«Բայց բանը ոչ միայն մեր ժողովրդի դեմ կազմակերպված ցեղասպանությունն է, այլև նման ֆաղափականության վտանգի ըմբռնումը և դրա դեմ միավորվելու ձգտումը»:

Գործողության և դրա հետևանքների շփոթը ևս կարող է հասցնել անիմաստ դատողության և տարակուսանքի մեջ գցել ընթերցողին:

«Պարոն Մանուկյանի սխառնաբերի հետաքննության ընթացքում նրա հավերժացված միջոցների գումարը հասավ 2,6 մլն դոլարի»: Բայց Մանուկյանի հափշտակած միջոցների գումարը հասել է 2,6 մլն դոլարի ոչ թե նրա «սըխառնաբերի հետաքննության ընթացքում», այլ այդ ընթացքից առաջ և անկախ: Հետաքննությունը ընդամենը բացահայտել է այդքան գումար կազմող միջոցների առկայությունը: Ըստ երևույթին, պետք է լինե՞ր՝

«Հետաքննության ընթացքում բացահայտվեց, որ հավերժացված միջոցների գումարը հասել է 2,6 մլն. դոլարի»:

Լրատվական անհեթեթությունն իրեն զգացնել է տալիս նյութի և դրանից բխող եզրակացության ոչ համապատասխանության, երբեմն էլ ամբողջովին հակադիր բնույթի դեպքում և այլն:

Հայտնի է, որ իրազեկության պակասը կարող է լցվել ճոռոմ և անճաշակ հանդիսավորությամբ: Նույն դերն են կատարում նաև այնքան տարածված միտինգային բեմադրություններ և անմիտ վերացականություններ:

«Ապրիլի 13-ին, իր 107-րդ նիստով (Գերագույն խորհրդի—Ա. Խ.) վերջապես ավարտվեց Հայաստանի Հանրապետության արարման մարաթոնը»:

Մի կողմ թողնենք մարզական եզրի անճարակ վկայակոչումը, բայց այդ դեպքում մեզ, հավանաբար, պետք է բացատրել, թե ինչ է նշանակում «արարման մարաթոն»:

Համոզություններ ենթադրում է լրատվության կոնկրետություն, այն, որ դատողությունները, անգամ եթե պայմանական բնույթ ունենան, հենվելու են իրական, ծայրահեղ դեպքում հնարավոր հանգամանքների վրա: Լրատվությունը համոզիչ կարող է լինել, եթե առնչվի հասարակական կարծիքի հարցադրմաներին կամ ծայրահեղ դեպքում հարգանք հանդես բերի այդ կարծիքի հանդեպ: Լրագրողը պետք է լրատվություն տա և ոչ թե զբաղվի բանդագուշանքով, թող ներվի մեզ այս կտրուկ խոսքը: Կամայականությունը երբեք համոզիչ չի կարող: Ինչի է նման այսպիսի դատողությունը, և այն էլ կաթողիկոսական րնտրությունից հետո:

«Կաթողիկոսական ընտրություններից հետո, ըստ մի լրատվության, պարտ-

ված թեկնածուներից մեկը համայն հայությանը ցույց տվեց, որ անվիճելիորեն ինքն է լինելու հայոց հաջորդ հայրապետը, եթե ավելի լուրջ խնդիրների առջև կանգնած չլինի ֆաղափականությունը հաջորդող ընտրությունների ժամանակ»:

Պետք է պահպանել շափի ղգացումը: Այսպես կարելի է գրել ոչ թե կաթողիկոսական թեկնածուի, այլ մրցումներում պարտված, բայց խոստումնալից բռնցքամարտիկի մասին:

Դարձվածի համոզվածությունը ամենաընդհանուր իմաստով հենվում է տրամաբանության վրա: Ընդ որում, դարձվածը կարող է անսպասելի լինել, դա ողջունելի է, շատ դեպքերում, միայն թե պետք է լինի մտածված, հետամտի նորույթի ընկալմանը: Անսպասելի դատողությունը միշտ էլ այս իմաստով լարում է ընթերցողի հետաքրքրությունը, նոր կողմից ներկայացնում իրողությունը, որ չէր կարող նկատել ընթերցողը: Դրան հակառակ, տրամաբանությունից զուրկ լրատվությունը, որքան էլ հավանի ինքնատիպության, ի վերջո հավասարվում է մեղայնքան ծանոթ ձանձրալի ժանրին: Ուշադրություն դարձրեք «Գայանե» բալետին նվիրված մի լրատվության հետևյալ դարձվածին.

«Ներխուսաւորդ, խանդավառված դիրիժոր, եռանդուն երաժիշտներ, հյուրընկալ հասարակություն և մի բարձրաթոյի՜ Գայանե՝ շարադրված էր ստորեւ»: Կարծես թե կարելի է հասկանալ լրատվության բարձրաթոյի մտքերը, բացի անտրամաբանական մի անակնկալից. բալետը ինչպես կարող էր «շարադրվել ստորեւ»:

Լրատվության մեջ տարածված է համոզվածության ճանաչված հակոտնյաներից մեկը. շարադրանքի մեջ հանկարծ ներխուժում է քնարերգությունը, որն արդեն անտեղի լինելով, ավելի է թանձրացնում կեղծ զգացմունքայնությունը: Ամենևին պետք չէր սենտիմենտալ հայրենասերի կեցվածք ընդունել:

«Լավագույն ժպիտը, որ ծնվում է արվեստին ու մարդկանց նվիրումով ծառայելիս, սեփական բեռի ու ինքնագնահատման լավագույն միջոցը չէ՝ արդյոք, նաև այսօր, երբ կերտվում է մեր անկախ հանրապետությունը, այլև յուրաքանչյուրիս հետագա կենսաձևը»:

Անկախության գաղափարը հանգիստ չի մնում նույնիսկ բժշկական գրականությանը նվիրված գրախոսականի մեջ.

«Նրա ջանքերի շնորհիվ միայն վերջին մեկ տարվա ընթացքում լույս են տեսել տեսական և գործնական բժշկագիտության կարևորագույն հիմնախընդիրներին նվիրված 3 ձեռնարկներ, որոնցից ամեն մեկը շոշափելի ներդրում է անկախ պետականության հաստատման և առողջապահության հետագա զարգացման բնագավառում»:

Ցանկացած համադրում լրատվության մեջ պետք է լինի տեղին և բավարարի ճաշակի պահանջները:

4. Համառոտություն: Արդի լրատվության կարևորագույն արժանիքներից մեկը, ընդամենը, չափանիշի կշիռ ունեցող արժանիքներից մեկը համառոտությունն է, զուսպ վերաբերմունքը խոսքի նկատմամբ: Սեղմ տարածության վրա մտքեր հայտնելու, քիչ բառերով շատ բան ասելու արվեստը մեր մշակույթում ըստ արժանվույն է գնահատվել վաղուց ի վեր և այժմ էլ շարունակում է պահպանել իր նշանակությունը: Այս ընդհանուր ձևակերպումը լրատվության մեջ դրսևորվում է իր հասկանալի առանձնահատկություններով՝ համառոտ հաղորդել նորույթի էական կողմերը կամ կողմը, չժալալվել մանրամասների մեջ, հիշել, որ մանրամասները այն դեպքում են միայն հիմնավորվում, եթե նպաս-

տում են էականի ընկալմանը ընթերցողին նախապատրաստելու կամ էականը հասկանալի և ամբողջական նկարագրելու նպատակին: Համառոտությունը հորհրդի ինքնանպատակ չի լինում. իր տրամաբանական ծավալով այն պետք է հավասարաբեկ լինի հասկանալիությանը: Լրատվական համառոտությունը մտրի համառոտություն է և ոչ թե մտքի հապավում: Այս պատճառով էլ լրատվական համառոտությունը միշտ ելնում է դանգվածային ընթերցողի դատողական հնարավորություններից կամ ընկալման ունակություններից: Այստեղ հարկ է հիշել, որ ի սեր համառոտության կարիք չկա առանձնապես հույս դնել դիտական եղբերի կամ հասկացությունների առատ գործածության վրա: Գիտական եղբերից, եթե անգամ լրատվությունը վերաբերի գիտական թեմայի, նախընտրելի է օգտվել խիստ գզույշ, զուսպ և ըստ հնարավորին քիչ, որովհետև ընթերցողների շրջանը դեռևս գիտական հասարակայնություն չէ, և առաջին հերթին անհրաժեշտ է ապահովել նյութի հասկանալիությունը: Մեր լրատվության լեզուն ցույց է տալիս, որ առաջնահերթը այսօր մնում է բառերի ճիշտ գործածության խնդիրը: Նախ հարկ է ճիշտ կիրառել բառը, և ապա միայն ընտրություն անել հոմանիշների մեջ:

Լրատվության համառոտության սկզբունքները նկատի առնելիս պետք է խուսափել կրկնություններից: Արդեն ասվածը կրկնելու երևույթը, որ մերժելի է ամեն տեղ, բացառությամբ, թերևս, մանկավարժական նպատակներով արվող կրկնությունից, լրատվության մեջ ի հայտ է գալիս որպես հակալրատվություն: Այստեղ այն բացարձակապես ավելորդ է և անտեղի, որովհետև սպանում է ընթերցողի հետաքրքրությունը և նյութի ընթերցումը շարունակելու ամեն մի ցանկություն: Կրկնության էությունը չի փոխվում, եթե այն մատուցում ենք լեզվական տարբեր միջոցներով: Այսպես, հասկանալի է, որ լուրը հաստատվում է աղբյուրի վկայակոչումով, բայց այդ վկայակոչումը կարելի է անել մեկ անգամ և ոչ ավելի:

«Ինչպես հաղորդում է ԻՏԱՌ—ՏԱՍՄ-ի թղթակիցը էլ Քուվեյթից... բարձրագույն խորհրդի ներկայացուցիչը հայտարարել է...» և քիչ անց. «Ըստ նույն աղբյուրի տվյալների...»:

Երկրորդ վկայակոչումը ամբողջովին ավելորդ է:

Լրատվության մեջ տարածված է կազմակերպությունների, պաշտոնների և ալլնի անիմաստ կրկնությունը, որից կարելի է հեշտությամբ ազատվել՝ խընայելով տեղը, ժամանակը, ինչպես նաև ընթերցողի համբերությունը:

«ՀՀ Գերագույն խորհրդի նախագահը մայիսի 3-ին ընդունեց աշխատանքային այցով Հայաստան ժամանած ԱՊՀ միջխորհրդարանական վեհաժողովի խաղաղարար առաջնությանը տարածաշրջան այցելած պատվիրակությանը»:

Եվ քիչ ներքևում դարձյալ՝

«ԱՊՀ միջխորհրդարանական վեհաժողովի պատվիրակության՝ տարածաշրջան կատարած այցի ընթացքում նախատեսվում են...»: Երկրորդ անգամ կարելի էր նշել միայն «պատվիրակությունը»՝ առանց լրիվ անվանումի, որն արվել է վերո: Կրկնությունը լրատվությունը դարձնում է տափակ և անշարժ՝ հիշեցնելով տեղապատույտ անող անվազողի ապարդյուն աշխատանքը:

«Զինժառանգները լավ նախապատրաստություն են անցել,— հայտնել է գումարտակի հրամանատար կապիտան Ալեքսեյ Ժիրլինսկին,— նրանք, բացի հրազենից, ունեն նաև ծանր գեներ,— նշել է գումարտակի հրամանատարը»:

Կարելի էր խուսափել կրկնությունից.

«Զինծառայողները լավ նախապատրաստություն են անցել, նրանք, բացի հրազենից, ունեն նաև ծանր գնեք,— հայտնել է գումարտակի հրամանատար Կապիտան Ալեքսեյ Ժիրինսկին»:

Նթե ներկայացվում է որոշումը, ապա միանգամայն անտեղի է դրա կետերը նշելիս անընդհատ վկայակոչել որոշումը.

«Կենտրոնական բանկի վարչությունը որոշում է ընդունել բանկային հաշիվներից կանխիկ դրամի դուրսգրման կարգի վերաբերյալ: Համաձայն այդ որոշման, սահմանվել է, որ հաճախորդներին... Հաստատված նոր կարգով վերացվել է նաև այն սահմանափակումը...»: Ընդգծված բառակապակցությունները ավելորդ են, որովհետև շատ քիչ հատկություն է պահանջվում ընթերցողին տեղեկացնելու, որ բոլոր նորույթներն էլ բխում են այդ որոշումից:

Լրատվության մեջ հանդիպում ենք այսպես կոչված «թաքնված» կրկնության: Լրագրողը զգում է, որ կրկնությունն անհարկի է և գիմում է հոմանիշի գործածության, բայց այս միջոցը չի փրկում դրությունը, ընդհակառակն, շփոթ է առաջացնում շարադրանքում.

«Հատուկ լուծույթով թեթևակի նշված փողերը հագիվ էին հայտնվել ելուզակների ձեռքին, երբ հանցագործների դաստակներին հայտնվեցին ձեռնակապեր»:

«Հանցագործներն» ու «ելուզակները» նույն մարդիկ են, հոմանիշներ, բայց այստեղ անտեղի շեղում են ընթերցողի ուշադրությունը: Երկրորդ դեպքում պարզապես պետք էր գործածել անձնական դերանուն՝ «...երբ նրանց դաստակներին հայտնվեցին ձեռնակապեր»:

Կրկնությունը, թվում է, ունի մեկ ընդհանրական պատրանք՝ պարզության պատրանք: Իրականում այն լրատվությունը դարձնում է ձգձգված և պարզունակ:

Լրատվության, մանավանդ, կարճ լրատվության մեջ ավելորդ մանրամասներ հիշեցնում է կարկատան՝ նոր հագուստի վրա: Այստեղ (և առհասարակ) ամեն մի դարձվածք պետք է նպատակասլաց լինի, մինչդեռ կողմնակի, հենց այնպես արված դատողությունը ավերում է այդ նպատակասլացությունը: Միտերանի՝ մարզասեր լինելուն նվիրված հետևյալ լրատվության մեջ առանց դժվարության կարելի է նկատել այդ «կարկատանը».

«Չնայած նախագահական իր ծանր գործերին և ազատ ժամանակի բացակայությանը, Ֆրանսուա Միտերանը «պարապ» ժամանակ էր փնտրում ֆուտբոլային խաղ դիտելու կամ սպորտով զբաղվելու համար: Մեծ տարիքը իրեն հնարավորություն էր տալիս միայն զուգ խաղալ: Բայց Միտերանը չէր մոռանում, որ երիտասարդ տարիքին ֆուտբոլով էր զբաղվում, դարպասապահ էր և հանդես է եկել մի շարք թիմերում: Երբ անցյալ մայիսի 17-ին Միտերանը հրաժեշտ տվեց նախագահի Նիսեյան պալատին, չնայած Փարիզից դուրս ուներ մի քանի տներ, սակայն բնակություն հաստատեց մայրաքաղաքի շենդ շենքերից մեկում: Նրա հարազատներն ասում են, որ Միտերանը երբեք չէր մոռանում ամեն օր «աչքի անցկացնել» «էկիպ» օրաթերթը (մարզական օրաթերթ—Ա. Խ.):

Կապ ունի՞ արդյոք, ընդգծված դարձվածք Միտերանի մարզական հակումների հետ: Ամենևին: Ուստի այն ավելորդ է և անտեղի: Ավելորդ մանրամասների կուտակումը սպառնում է ոչնչացնել լրատվության բուն իմաստը:

Որակումների կամ մակդիրների շուրջումը ևս համառոտության դեմ ուղղված սովորական մեղանշումներից է, որից ցանկալի է խուսափել: Մակդիրների առատ գործածությունը հոգնեցնում է ընթերցողին, շարադրանքը դարձնում խրթին ու անմարսելի:

«Ուղղակի և բազմաբնույթ մեր օրերում, շոգալից հեղաշրջման քառանկրում, գերլարված մարդկային կյանքը անապեղի տարբեր է ներկայանում յուրաքանչյուր արվեստագետի ստեղծագործության մեջ»:

Ժամանակին Եկատերինա Երկրորդ կայսրուհին, երբ նոր էր սկսում ուսուսերեն սովորել, երեք աստանոց բառի գրության մեջ շորս սխալ էր անում ИСГО՝ փոխ. ешѣ): Վերը բերված ընդամենը մեկ դարձվածի մեջ գործածվել է հինգ մակդիր. չափազանց շատ չէ՞, արդյոք:

Բառապաշարի աղքատությունը, որ թվում է, համառոտության պետք է մղի, ընդհակառակն, հասկացությունների, բառերի կրկնության պատճառով շարադրանքը դարձնում է միօրինակ ու ձանձրալի:

«Էլեկտրաէներգիայի իրացման ժամանակ թուլատրվում են իրացման բոլոր ձևերը, ըստ որում, էլեկտրաէներգիայի իրացման պատասխանատվությունը դրվում է շրջանային էլեկտրացանցի վրա»:

Նախընտրելի կլիներ հրաժարվել ոչինչ չասող կրկնություններից և խմբադրել դարձվածը. «Թուլատրվում են էլեկտրաէներգիայի իրացման բոլոր ձևերը, ընդ որում, պատասխանատվությունը դրվում է շրջանային էլեկտրացանցի վրա»:

Ըստ էության, լրատվության համառոտությունը կազմում է լրագրական հմտության բաղկացուցիչ բաժիններից մեկը, և եթե առանձնացրել ենք այն, ապա նկատի ենք ունեցել համառոտ գրելաձևին տիրապետելու առանձնահատուկ կարևորությունը: Հետևաբար, լրատվության մեջ հատուկ ուշադրություն պահանջող հմտություններից մեկը համառոտությունն է, որին դեռևս պետք է հասնեն լրագրողները, թեև մամուլում քիչ չեն սեղմ տարածության վրա բավական լայն տեղեկատվություն հաղորդող նյութերը:

Ճ. Մուտֆ: Կուրը մատուցելու սկիզբը էական նշանակություն ունի ամբողջ լրատվությունը տպավորել ներկայացնելու տեսակետից: Լրատվություն հաղորդելու վարպետությունը, հենց սկզբից ընթերցողի ուշադրությունը գրավելու շնորհքը բացառապես կախված են լրագրողի հնարամտությունից և գրելաձևից: Այդ սկիզբը կարելի է անվանել մուտք՝ որով և հիմնականում պայմանավորված է լրատվության արվեստը: Բովանդակության իմաստով մուտքը պետք է պարունակի լուրի կամ նորույթի կարևոր կողմը (կողմերը) և կամ էլ, եթե զուտ շարադրանքում է հաղորդվելու բուն իրողությունը, ապա մուտքը պետք է նախապատրաստի այս վերջինի հաղորդումը: Ձևի տեսակետից, բոլոր դեպքերում մուտքը պետք է լինի հրահրող, պարզ, ոչ երկարաշունչ, անմիջական և պարունակի գոնե շարունակության խոստում, որը իրոք, հետաքրքիր է լինելու ընթերցողին: Այս դեպքում պետք է նկատի առնել այն ընթերցողին, որը թուղթիկ հայացքը սահեցնում է նյութերի վերնագրերի և դրանց առաջին պարբերությունների վրայով: Եթե մուտքը ստիպում է աճապարող ընթերցողին

¹ «Մուտք» ասելով նկատի ունենք անգլո-ամերիկյան լրագրական լեզվում գործածվող lead հասկացությունը, որ բառացիորեն կարելի է ընկալել «տանող» իմաստով: Այն լրատվության առաջին դարձվածն է կամ առաջին պարբերությունը:

կանգ առնել, ապա կարելի է ասել, որ հաջողությամբ է կայացել նրա և լրատվության հանդիպումը: Այսինքն՝ դրան պետք է հետևի ընթերցումը:

Մուտքի հաջողվածության գլխավոր պայմանը կադապարներին և միօրինակելություններին աղատվելն է: Իր հետամտած նպատակին համապատասխան, մուտքը, եթե կարելի է այսպես ասել, ամբողջ լրատվության սկիզբն ու հաջողության երաշխիքն է: Ամենահետաքրքիր նորույթը կարող է կորչել ճապաղ, ծանրամարս և ավելորդություններով զարդարված մուտքի բեռան տակ: Անփորձ լրագրողը շտապում է մեկ դարձվածի մեջ տեղավորել եթե ոչ բոլոր փաստերը, ապա դրանց մեծ մասը՝ անգիտանալով կարևորը պարզ շարադրանքով ներկայացնելու լրագրական տարրական ճշմարտությունը:

«Մինչ կիրակի օրը կայացած նախագահական ընտրությունների առաջին փուլում ձայների 23 տոկոսը հավաքած սոցիալիստական կուսակցության թեկնածու Լիոնել Ժոսպենը հաջորդ առավոտ իր օգնականներին էր հավաքում ընտրությունների վճռական փուլին՝ մայիսի 9-ին նախապատրաստվելու համար, 20 տոկոսով երկրորդ արդյունքը հավաքած Ժակ Շիրակը զանգահարում էր իր կուսակից վարչապետ Բալադյուրին, որ նախորդ գիշեր խոստացել էր իր հավաքած 18,8 տոկոս ձայները տրամադրել Փարիզի ֆաղափապետին»:

Ամեն ինչ միանգամից ասելու ձգտումը այստեղ հասցրել է ոչինչ չասելու էֆեկտին, ինչպես լինում է գրեթե միշտ: Նկատի ունեցե՛ք ավելորդ դերբայական դարձվածների առատությունը, «հաջորդ առավոտ», «նախորդ գիշեր» արտահայտությունները, որ անկասկած, ընթերցողից մտավոր աշխատանք են պահանջում ժամանակի հատվածները միացնելու համար: Մինչդեռ, մուտքը կարելի էր ավելի քան պարզեցնել:

«Կիրակի օրը նախագահական ընտրությունների առաջին փուլում ձայների 23 տոկոսը հավաքեց սոցիալիստական կուսակցության թեկնածու Լիոնել Ժոսպենը, որն անմիջապես ձեռնամուխ եղավ ընտրությունների վճռական փուլի (մայիսի 9) նախապատրաստմանը: Ձայների 20 տոկոսով երկրորդ արդյունքի հասած Ժակ Շիրակը ակնկալում է իր կուսակից վարչապետ Բալադյուրի օգնությունը, որը խոստացել էր իր հավաքած ձայների 18,8 տոկոսը տրամադրել նրան»:

Նորույթի հաղորդումը սկսվում է մուտքից, իսկ մուտքը ամենևին չի հավակնում պարունակելու ամբողջ նորույթը կամ լրատվությունը: Մուտքի մեջ կարելի է տալ կամ նորույթի էությունը, կամ էլ՝ գլխավոր փաստերը: Մուտքը ոչ կարևոր, երկրորդական փաստերով հագեցնելը հիշեցնում է անճաշակ ցուցափեղկ, որը բթացնում է մեր հետաքրքրությունը այն ամենի նկատմամբ, ինչ կա այդ ցուցափեղկի հետևում:

«Երեկ առավոտյան աշխատանքային խորհրդակցությունում ֆալստերդդի նախագահ Վ. Խաչատրյանը հանձնարարեց համապատասխան ծառայություններին (նախ. տեղակալ Վ. Պետրոսյան) սկսել ասֆալտապատման և բարեկարգման աշխատանքները, ըստ որում մայիսի և վաղուցների թե՛ հատվածները սալահատակել, որը թեև թանկ, բայց առավել դիմացկուն է»: Մուտքը անհաջող է. նախ, այն սկսվում է երկրորդական փաստի առանձնացումով (հետագա շարադրանքից պարզ է դառնում, որ խորհրդակցությունում քննարկվել են նաև լուսավորության, շրամատակարարման և այլ հարցեր, որոնք շատ ավելի կարևոր են բնակչության համար, քան ռեպարի և փողոցների թե՛ հատվածները սալահատակելը»): Այնուհետև, մուտքը վանում է իր լեզվական մե-

դանշումով՝ «առավել դիմացկուն» լինում է ոչ թե սալահատակելը, այլ սալահատակը: Անհասկանալի է, թե փակագծում ինչու է հիշվում նախագահի տեղակալ Վ. Պետրոսյանը (ընթերցողը պետք է գլուխ կոտրի՝ գտնելու, թե նա արդյոք համապատասխան ծառայությունները վերահսկողն է, թե՞ քաղխորհրդի նախագահը տվյալ դեպքում նրան է հանձնարարել զբաղվելու համապատասխան ծառայություններով):

Որոշ դեպքերում նորույթ շարագրելը ոչ միայն մասնագիտորեն չպատրաստված, այլև իր գրածը չվերահսկող լրագրողի է հանձնարարվում, որի արդյունքը իրեն սպասեցնել չի տալիս:

«Ադրբեջանական մի շարք հասարակական կազմակերպություններ, որոնք ներկայացնում են Ադրբեջանի ռուսալեզու բնակչությունը և Բաքվում Ռուսաստանի դեսպանատունը, ապրիլի 15-ին կկազմակերպեն այցելություն Երկրորդ համաշխարհային պատերազմի զոհերի գերեզման»: Նախ, որևէ երկրի հասարակական կազմակերպություն չի կարող ներկայացնել այդ երկրում արտասահմանյան որևէ դեսպանատուն: Բայց ավելի անհեթեթսն այն է, որ Բաքվում՝ խոր թիկունքում, կարող էր լինել պատերազմի զոհերի գերեզման: Պետք էր խրմբագրել՝

«Ադրբեջանի ռուսալեզու բնակչության մի շարք հասարակական կազմակերպություններ և Բաքվում Ռուսաստանի դեսպանատունը ապրիլի 15-ին կայացնեն Երկրորդ համաշխարհային պատերազմի զոհերին նվիրված հուշարձան»:

Անհաշող է այն մուտքը, որ էականն ու երկրորդականը ներկայացնում է իբրև համազոր իրողություններ: Բնականաբար, այս դեպքում չի ընդգծվում կարևոր փաստը (մեջբերման անձնանունները նշում ենք սկզբնատառերով):

Մարտի 28-ին Երևանի Սպանդարյան շրջանի գլխավոր դատախազ Վ. Պետրոսյանը մերժել է վերանայել Հ. Հ.-ի սպանության նախնական մեղադրանքով կալանքի տակ գտնվող Մ. Ն.-ի հորեղբոր՝ Պ. Թ.-ի նկատմամբ Սպանդարյանի շրջանի ժողդատարանի մարտի 21-ի խուլիգանության համար 15-օրյա ազատազրկման դատավճիռը՝ պատճառաբանելով, որ որոշումն օրինական է և այն վերանայելու հիմքեր չկան»:

Զգացվում է նյութը համառոտելու կարիք:

«Մարտի 28-ին Սպանդարյան շրջանի գլխավոր դատախազը մերժել է վերանայել Հ. Հ.-ի սպանության մեղադրանքով կալանավորված Մ. Ն.-ի հորեղբոր նկատմամբ 15-օրյա ազատազրկման դատավճիռը (խուլիգանության համար), որը կայացրել էր նույն շրջանի ժողդատարանը»:

էականի հետ միասին մուտքը պետք է նախապատրաստի նոր փաստերի ընկալումը՝ միաժամանակ խուսափելով փաստերի կուտակումից: Երբեմն մերկապարանոց փաստերի կուտակմանը փոխարինում է բառերի շարանը՝ ըստեղծելով անհարկի հանդիսավորություն:

«Աշխարհի ողջամիտ մարդկանց սկեռուն ուղադրության տակ այսօր տեղի է ունենում ոգեկանչը, որը չի մնում մեր ազգային շրջանակներում. պատմության արհավիրքը կարծես թե շտկվել է ուզում»:

Խոսքը վերաբերում է եղբուհի տարելիցին, դրա հիշատակմանը, և «ոգեկանչ» բառն այս իմաստով բանաստեղծությունից բացի (ի դեպ, կասկածելի բանաստեղծությունից), այլ դեր չունի: Իսկ «արհավիրքը», որ արդեն կատարված իրողություն է, չի կարող շտկվել, որովհետև արդեն կատարված ողբերգությունը չի շտկվում, այն պարզապես կարելի է ընդունել կամ չընդունել: Այ-

սինքն՝ շտկվել կարող է միայն վերաբերմունքը արհավիրքի նկատմամբ:

Կարելի է խուսափել կեղծ հակադրություններից կամ այդպիսի հակադրության պատրանք ծնող դարձվածներից: Հաճախ դա չի հաջողվում այն ժամանակ, երբ լրագրողը ցանկանում է ստեղծել ընդհանուր հենք, նախապատրաստելով բուն լրատվությունը:

«Ռուս-շվեդական համագործակցությունը շատ հին պատմություն ունի, սակայն այն հիմնականում իրականացվում է առևտրի միջոցով»:

Բայց չէ՞ որ այստեղ հակադրության նշույլ անգամ չկա. էլ ինչու «սակային», երբ ցանկացած համագործակցություն կարող է և շատ հին պատմություն ունենալ, և առանց «սակայինի», տվյալ դեպքում իրականացվել առևտրի միջոցով: Իսկ եթե հակադրություն կա, ապա այն որոշակիություն է պահանջում (ժամանակի կամ մի այլ գործոնի տեսանկյունից): Թերևս՝

«Ռուս-շվեդական համագործակցությունը շատ հին պատմություն ունի և այսօր հիմնականում իրականացվում է առևտրի միջոցով»:

Լրատվության մուտքի թշնամին շտամպն է, պաշտոնական դարձվածների շարաշահումը: Իսկ երբ դրա հետ միասին մուտքը հավակնում է ամբողջովին կամ գրեթե ամբողջովին սպառել նորությունը, ապա կարելի է պնդել, որ ընթերցողը չի կարդա այդպիսի մուտքը (էլ չենք ասում՝ դրա շարունակությունը) մինչև վերջ: Մի՞թե լրագրական վարպետության որևէ նշույլ կարելի է գտնել այսպիսի ծավալուն մուտքի մեջ:

«ՀՀ կառավարության մամուլի ծառայությունից «Նոյյան տապան» գործակալությանը հայտնեցին, որ ապրիլի 1-ից հացի գների, բնակչության տրվող ջրի սակագների և հեռախոսի համար արճեցնողներին վճարի, ինչպես նաև ապրիլի 15-ի էլեկտրատրանսպորտի սակագների բարձրացումը պայմանավորված է այս բնագավառում ՀՀ կառավարության կողմից տարվող տնտեսական փառափառական քայլերով, որի նպատակն է աստիճանաբար վերացնել բյուջեից արվող սուբսիդիաները և խաչաձև սուբսիդիաները, ձեռնարկություններին տրվող դատացիաները, պայմաններ ստեղծել տնտեսավարող սուբյեկտների արդյունավետ գործունեության համար, ինչպես նաև ազատված բյուջետային միջոցները նպատակաուղղել բնակչության առավել կարիքավոր խավերի սոցիալական պաշտպանվածության միջոցառումների իրականացմանը»:

Ակներև է, որ գործ ունենք հում նյութի հետ: Մինչդեռ, կարելի էր նշել միայն աղբյուրը («Նոյյան տապան»), որի շնորհիվ կկրճատվեն առաջին ութ բառերը: Լրատվությունը կարելի է կառուցել կարճ դարձվածներով, հեռացնելով ավելորդ բառերը և կաղապարները:

«Նոյյան տապան». ապրիլի 1-ից կբարձրանան հացի գներ, ջրի սակագներ, հեռախոսի վճարը և ապրիլի 15-ից՝ էլեկտրատրանսպորտի սակագներ. այս բարձրացումով կառավարությունը հետամտում է կրճատել բյուջեից արվող հատկացումները: Ազատված միջոցներով պայմաններ կստեղծվեն արդյունավետ տնտեսավարման և բնակչության առավել կարիքավոր խավերի սոցիալական պաշտպանության համար»:

Մուտքի մեջ միանգամայն ավելորդ են ոչ կարևոր, երկրորդական նշանակության տվյալներն ու փաստերը: Ավելորդ մանրամասները լրատվության մեջ հիշեցնում են բանալու անցքից նայելու էֆեկտը, որ կարող է խոսել ամեն ինչի, բայց ոչ կիրթ վարքագծի մասին:

«Եզիպտոսում ՀՀ դեսպանությունը Գեգիս Երսիսը հյուրանոցի Ազիզա դահլիճում վերջերս կազմակերպել էր հանդիպում եզիպտացի գործարար մարդկանց հետ Հայաստանում հոկտեմբեր ամսին բացվող առևտրի խախուսման եզիպտական մշտական կենտրոնին առնչվող գործնական խնդիրները ուսումնասիրելու համար»:

Նշված են նաև Հյուրանոցի, և՛ այդ Հյուրանոցի դահլիճի անունները, որոնց հետ նույն հաշտությունը կարելի էր հիշապակել, թե այդ դահլիճը որ ֆիրմայի կառավարող էր կահավորված: Մինչդեռ, դրանք ոչինչ չեն տալիս լրատվությանը: Կարելի էր հրաժարվել այդ անուններից՝ թողնելով միայն կարևորը:

«Եզիպտոսում ՀՀ դեսպանությունը վերջերս կազմակերպել էր հանդիպում սևդացի գործարարների հետ՝ ծանոթանալու հոկտեմբերին Հայաստանում բացվելիք առևտրի խախուսման եզիպտական կենտրոնին առնչվող խնդիրներին»:

Նրբեմն լրադրողները մուտքը սկսում են որևէ բանի (կամ հասկացության) սահմանումով և ապա անցնում բուն լրատվությանը: Այս դեպքում սահմանումը, որոնք էլ աղատված լինի բառարանային շորտից՝ լինի և հանրամատչելի, սխալ է սպառնալիք լինի, պահպանի բանի (կամ հասկացության) բնորոշ իմաստը:

«Պրեզիդենտացիա» վերնագրին հետևում է մուտքը:

«Ստաբիլ բառ է, սովորաբար գործածվում է փառափառ ասպարեզ իջնող կուսակցությունների վերաբերյալ, երբ սրանք առաջին անգամ ներկայանում են հանրությանը»:

Իսկ ինչու միայն կուսակցությունների. պրեզիդենտացիա կարող է լինել նաև արվեստի, գրականության, գիտության, բանկային գործարարների բնագավառի երևույթ (կամ անձը) ներկայացնելու և այլ դեպքերում:

Հաշտված կարելի է համարել, ի հակադրություն վերոհիշյալ օրինակների, մուտքի հետևյալ նմուշները:

«Ղրիմցիների հետ ապրիլմեկյան կատակ է արել Ուկրաինայի կառավարությունը»: Կամ՝

«Նրբեմն այս տարվա վերջերսին 87-ամյա Էդուարդ Գեգիսը մահացավ, նրա հետ անհետացավ մարդկային հիշողության մի մասնիկը»:

Եվ կամ այս մուտքը՝

«Էֆսպրեսո գազետան» տխուր հումորով գրել է, որ մարդասպաններից չես խուսափի, երբ պետությունը անգոր է և դիմում է կախարհների օգնությանը»:

Նշված օրինակները գոհացնում են մուտքի գլխավոր պահանջներից մեկը՝ լարել ընթերցողի հետաքրքրասիրությունը և նախապատրաստել նրան լրատվության:

(շարունակելի)